Արձանագրություն N 3

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով <<Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքի կառուցում>> ծրագրի շրջանակներում դպրոցի տիպարային շենքի նախագծման և ՀՀ մարզերի 22 համայնքում տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09.10.2019թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Շատվերյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան
Ռ. Ադամյան
Ֆ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Ար. Գրիգորյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ 02.08.2019թ.

ա) հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Արմստրոյ>> և <<Հուսալի կամար>> ՍՊԸ-ի համատեղ գործունեության (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

բ) ծանուցվել էր Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում (07.08.2019թ. դրությամբ) ստացվել էր եզրակացություն համաձայն որի՝ <<Արմստրոյ>> ՍՊԸ-ն ունեցել է 1 566 208 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ:

1.3 Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (06.08.2019թ. դրությամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել էին հետևյալ անհամապատասխանությունները.

- Որպես նմանատիպ պայմանագիր ներկայացվել էր ՀՀ պաշտպանության նախարարության հետ 18.05.2016թ. կնքված N ՍԸԱՇՁԲ-10/5-3 պայմանագիրը՝ 34 900 000 ՀՀ դրամ արժեքով, որը հանդիսանում էր <u>բնակելի շենքերի կառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման պայմանագիր և չէր համապատասխանում Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին՝ համաձայն որի նմանատիպ են սահմանվել հանրակրթական դպրոցների (տարրական, միջին, հիմնական, ավագ, վարժարան և միջնակարգ դպրոց), հատուկ հանրակրթական դպրոցների, արտադպրոցական կրթադաստիարակչական և նախադպրոցական ուսումնական

հաստատությունների կառուցման և/կամ ամբողջական վերակառուցման համապատասխան փորձաքննության դրական եզրակացություն ստացած նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

- Աշխատանքային ռեսուրսների մասով առկա էին հետևյալ անհամապատասխանությունները՝

ա) ներկայացվել էր

- արտոնագրված ճարտարապետի ենթակայությամբ աշխատող և արտոնագիր չունեցող թվով 1 ճարտարապետ՝ 3-ի փոխարեն,
- արտոնագրված թվով 1 ճարտարագետ-շինարար (կոնստրուկտոր)՝ 2-ի փոխարեն,
- նախահաշիվ կազմող թվով 1 մասնագետ /ճարտարագետ/՝ 2-ի փոխարեն,
- ճարտարագետ-շինարարական աշխատանքների կազմակերպման թվով 1 մասնագետ՝ 2-ի փոխարեն,
- գեոդեզիստ թվով 1 մասնագետ՝ 2-ի փոխարեն:

բ) Հավելված 5.2-ի աղյուսակում <<գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը>> սյան մեջ լրացված չէին մասնագետների կատարած աշխատանքները:

1.4 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի պահանջը, ինչպես նաև 1.2 կետը՝ գնահատող հանձնաժողովը մերժել էր Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ էր ներկայացրել հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման գործընթացը կասեցնելու, հանձնաժողովի նիստը տեղափոխելու և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած թիվ ԳԲՔԱ-LO-2019/61 որոշումը՝ <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ

(Դ. Շատվերյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 16.08.2019թ. տեղեկագրում (gnumner.am կայքում) հրապարակված հայտարարությունը (<<Արմստրոյ>> ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ) և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետով՝ 19.08.2019թ. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման գործընթացը կասեցվել էր՝ մինչև բողոքի քննության արդյունքներով որոշման ընդունելը:

2.2 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լևոն Օհանյանի կողմից 18.09.2019թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-LO-2019/61 որոշմամբ, պարտավորեցվել էր գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 13.08.2019թ. թիվ 3-1 արձանագրությամբ կայացված Մասնակցի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ մնացած մասով բողոքը մերժվել էր:

2.3 Քանի որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումն իրավապարտադիր է՝ գնահատող հանձնաժողովը որոշել էր.

- ուժը կորցրած ճանաչել 13.08.2019թ. N 3-1 արձանագրության 1.2 կետով ընդունած որոշումը և մինչև 01.06.2019թ. գործող Կարգի 47-րդ կետի համաձայն՝ ծանուցել Մասնակցին առաջարկելով- 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել 13.08.2019թ. N 3-1 արձանագրության մեջ նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3 ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(Դ.Շատվերյան)

3.1 Մասնակցի կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ.

- Որպես նմանատիպ ներկայացված 18.05.2016թ. կնքված N ՍԲԱՇՁԲ-10/5-3 պայմանագիրը՝ որը բնակելի շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման պայմանագիր է և 03.05.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԲԱՇՁԲ-17/3 պայմանագիրը, որը միայն մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների պայմանագիր է՝ չեն համապատասխանել Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին՝ համաձայն որի՝ նմանատիպ էին սահմանվել հանրակրթական դպրոցների (տարրական, միջին, հիմնական, ավագ, վարժարան և միջնակարգ դպրոց), հատուկ հանրակրթական դպրոցների, արտադպրոցական կրթադաստիարակչական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման և/կամ ամբողջական վերակառուցման համապատասխան փորձաքննության դրական եզրակացություն ստացած նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

- Գևորգ Աբրահամյանի որակավորումը հավաստող փաստաթուղթը (դիպլոմ) չի ներկայացվել:

3.2 Հիմք ընդունելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները և Կարգի 48-րդ կետը՝ հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը և հաջորդաբար տեղը զբաղեցնող է ճանաչել արդեն իսկ մեկ անգամ 13.08.2019թ. N 3-1 արձանագրությամբ հաջորդաբար տեղը զբաղեցնող մասնակցին՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4 ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու, հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցելու և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(Դ. Շատվերյան)

4.1 <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն դեռևս 13.08.2019թ. N 3-1 արձանագրությամբ սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել էր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև վերջինիս վերաբերյալ ստացվել էր Կոմիտեի եզրակացությունը, համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել ժամկետանց պարտավորություններ: <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանել է հրավերով սահմանված պահանջներին:

4.2 <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Բացակայում է որպես նմանատիպ ներկայացված <<ՍԵՐԵՈՆ>> ՍՊԸ հետ 26.06.2017թ. կնքված N ՆՊ001-ՄՍ 17 և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ 07.04.2016թ. կնքված N APD-04 պայմանագրերի դրական փորձաքննության վերաբերյալ հավաստող փաստաթղթերը:

- Գեոդեզիստի մասով՝ բացակայում է քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման համար ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված վկայականը:

- Աշխատանքային ռեսուրսների մասով՝ հրավերով պահանջվող 22-23 աշխատակիցների փոխարեն Մասնակցի կողմից ներկայացվել է թվով 21 աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն:

4.3 Մինչև 01.06.2019թ. գործող Կարգի 47-րդ կետի համաձայն՝ ծանուցվել է <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները, որոնք սահմանված ժամկետում շտկվել են վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

5. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Դ. Շատվերյան)

5.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

6. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Դ. Շատվերյան)

6.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 5-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

7. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/8 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Դ. Շատվերյան)

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Դ. Շատվերյան

Անդամ՝ _____ Ռ. Եղիազարյան

_____ Ռ. Ադամյան

_____ Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան